



## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (TOR)

**«Մեդիա եվ տեղեկատվական գրագիտության արագիտության արագիտության ծրագրի շրջանակում ՏՏ գործիքների նախագծում եւ մշակում**

*Ծրագիրն իրականացվում է Հանրային լրագրության ակումբի (ՀԼԱ) կողմից՝ Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան (ԱՄՆ Պետոդետ) Հանրային դիվանագիտության գրասենյակի աջակցությամբ:*

## Բովանդակություն

1. Ներածութեան մասին .....Error! Bookmark not defined.	
2. ՊԱՅԱՆՁՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՓՈՐՁ.....Error! Bookmark not defined.	
3. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ .....Error! Bookmark not defined.	
4. ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ .....Error! Bookmark not defined.	
5. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.....Error! Bookmark not defined.	
6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ.....Error! Bookmark not defined.	
7. ԿՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....Error! Bookmark not defined.	
ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՑԱՆԿԻ ՀԱՐԹԱԿԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՄ .....7	
ՀԱՎԵԼՎԱԾ Բ – INVID ՍՏՈՒԳՄԱՆ ՕԺԱՆԴԱԿ ԵՐԱԳՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ .....14	

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթղթի նպատակն է սահմանել **Հավելված Ա՝ «Փաստերի ստուգման ցանկի հարթակի նախագծում եւ մշակում»** և **Հավելված Բ՝ «InVID ստուգման օժանդակ ծրագրի տեղայնացում»** առաջադրանքներում կատարվող աշխատանքների շրջանակը: Ծրագիրն իրականացվում է Հանրային լրագրության ակումբի (ՀԼԱ) կողմից՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան (ԱՄՆ Պետդեպ) Հանրային դիվանագիտության գրասենյակի աջակցությամբ:

## 2. ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿՎՎՈՐՈՒՄ ԵՎ ՓՈՐՁ

Մասնակիցը պետք է տրամադրի հետեւյալ տեղեկությունները և հղումները՝ գնման մրցույթին մասնակցելու համար: Մրցույթին կարող են մասնակցել ինչպես անհատ ծրագրավորողներ, այնպես էլ ծրագրավորողների խմբեր եւ ծրագրավորման ընկերություններ:

Անհատ ծրագրավորողների և ծրագրավորողների խմբերի դեպքում պահանջվող որակավորումը և փորձը.

1. Համապատասխան ոլորտում 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաեւ **Հավելված Ա-ում** և **Հավելված Բ-ում** նկարագրված ծառայությունների ոլորտում նմանատիպ փորձի նկարագրությամբ ռեզյումե(ներ):
2. Հայկական մեդիա ոլորտի մասնագետների խնդիրների և պահանջների հստակ պատկերացում՝ համապատասխան տեխնիկական լուծում առաջարկելու համար:
3. Լարված իրավիճակներում աշխատելու ունակություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու և վերջնաժամկետները խստորեն պահպանելու ունակություններ:
4. Գերազանց կազմակերպչական հմտություններ, արդյունավետ թիմային աշխատանքի, աշխատանքային գործընկերների հետ լավագույն արդյունքներ գեներացնելու ունակություններ:

Ծրագրավորման ընկերությունների դեպքում պահանջվող որակավորումը և փորձը.

1. Տեղեկություններ ընկերության վերաբերյալ, ներառյալ՝ ամբողջական անվանումը, գործունեության տեսակը, հասցեն և կոնտակտային անձի տվյալները,
2. Ընկերության գործունեության համառոտ նկարագրություն և **Հավելված Ա-ում** և **Հավելված Բ-ում** նկարագրված ծառայությունների ոլորտում նմանատիպ փորձի ներկայացում,
3. Առնվազն 3 տարվա փորձ SՅՏ ոլորտում՝ կայքերի, վեբ-պորտալների և բջջային հավելվածների մշակման ուղղվածությամբ,
4. Վեբ ծրագրային ապահովման դիզայնի, տեղադրման, տեխնիկական աջակցության և վեբ համակարգերի կառավարման փորձ,
5. Հայկական համատեքստերի ըմբռնում և UI/UX օգտատերերի կարիքներին համապատասխանեցնելու հաջողված փորձ և հմտություններ,

6. Բարձրորակ և հուսալի լուծումների մշակման համար անհրաժեշտ համակարգերի համատեղելիության ապահովման փորձ,
7. Համապատասխան որակավորում ունեցող անձնակազմ, որը ներառում է վեբ պորտալների նախագծման ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող առնվազն մեկ փորձագետ:

### 3. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Քնառաջարկների մասին մանրամասն տեղեկությունները պետք է ներկայացվեն **2022 թվականի հուլիսի 10 ին՝ ոչ ուշ քան տեղական ժամանակով 18:00-ին**: Առաջարկները պետք է ուղարկվեն էլեկտրոնային փոստով [info@pjic.am](mailto:info@pjic.am) հասցեին՝ նամակի թեմայի տողում նշելով «MILA IT Tools»: Առաջարկները պետք է ներկայացվեն Adobe Acrobat, Microsoft Word եւ/կամ Excel ձևաչափերով: Բոլոր առաջարկները պետք է ներկայացվեն անգլերեն կամ հայերեն լեզուներով, եւ պետք է լիովին համապատասխանեն **Հավելված Ա**-ում և **Հավելված Բ**-ում սահմանված տեխնիկական հատկորոշումներին (SOW):

Նշված վերջնաժամկետից հետո ստացված առաջարկները չեն դիտարկվի տվյալ գնման մրցույթի շրջանակում:

### 4. ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Տեխնիկական առաջադրանքի շրջանակներում մշակվող առաջարկների վերաբերյալ բոլոր հարցերը կամ պարզաբանումները պետք է լինեն գրավոր և ներկայացվեն ՀԱԸ ծրագրերի ղեկավար Ալեքսանդր Մարտիրոսյանին՝ նշված էլեկտրոնային հասցեով [amartirosyan@publicjournalism.am](mailto:amartirosyan@publicjournalism.am):

### 5. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Բոլոր հայտատուները պետք է հետեւեն սույն Տեխնիկական առաջադրանքում սահմանված ցուցումներին՝ գնման գործընթացին մասնակցելու համար:

#### Ա. Կազմակերպության/Ֆիզիկական անձի մասին տեղեկություններ

##### Ընկերություն.

1. Տեղեկություններ կազմակերպության վերաբերյալ, ներառյալ՝ ամբողջական անվանումը, գործունեության տեսակը, գրասենյակների ցանկը (առկայության դեպքում), հասցեն, հեռախոսահամարը եւ կայքը:
2. Պատասխանատու կոնտակտային անձ, վերջինիս հեռախոսահամար(ներ)-ը և էլեկտրոնային հասցեն:
3. Առնվազն 3 տարվա համանման փորձ SS ոլորտում:

##### Ֆիզիկական անձ.

1. Մեդիա կամ SS ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձն ամփոփող ռեզյումե,

4. Պատասխանատու կոնտակտային անձ՝ վերջինիս հեռախոսահամար(ներ)-ը և էլեկտրոնային հասցեն,
2. Իրականացված աշխատանքները և փորձը ներկայացնող պորտֆոլիո:

**Բ. Ընկերության տեխնիկական հնարավորությունները**

1. Կազմակերպությունը նկարագրող տեղեկատվություն, ներառյալ՝ պահանջվող աշխատանքային շրջանակներում իրականացված համանման գործունեությունը/որակավորումը,
2. Ունեցած որակավորումներն ամփոփող ռեզյումե(ներ),
3. Իրականացված նախագծերը և փորձը ներկայացնող պորտֆոլիո:

**Գ. Իրականացված նախագծերի հակիրճ ներկայացում**

Գնման մրցույթի հայտատուները պետք է ամփոփ ներկայացնեն իրականացված համապատասխան առաջադրանքները/նախագծերը: Նախագծերի ամփոփումը պետք է ներառի նախագծի անվանումը, պատվիրատուի անունը, իրականացման ժամկետը և համառոտ նկարագիրը: Մասնակիցները պետք է ներկայացնեն վերջին 3 տարիների ընթացքում իրենց կողմից իրականացված և սույն Տեխնիկական առաջադրանքում սահմանված աշխատանքների շրջանակներին համապատասխանող 3 նախագծերի համառոտ նկարագիրը՝ ստորև ներկայացված աղյուսակի ձևաչափով: Եթե պատվիրատուի անունը գաղտնիության նկատառումներից էլիտելով չպետք է բացահայտվի, աղյուսակում Պատվիրատուի անվան փոխարեն պետք է ավելացնել «գաղտնի» նշումը:

Առաջադրանքի անվանում/նախագծի անվանում	Նախագծի եվ մատուցված ծառայությունների համառոտ նկարագիր	Պատվիրատուի անուն	Պատվիրատուի կոնտակտային անձ	Իրականացման ժամկետներ

**Դ. Մանրամասն ներկայացված բյուջե**

Գնման մրցույթի հայտատուները պետք է գնային մանրամասն առաջարկ ներկայացնեն, որը ներառում է յուրաքանչյուր միավորի հաշվարկված գինը ՀՀ դրամով: **Հավելված Ա-ի** և **Հավելված Բ-ի** վերաբերյալ գնային առաջարկները պետք է առանձին ներկայացվեն: Գնառաջարկները չպետք է ներառեն ԱԱՀ:

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Նախապատվությունը կտրվի այն առաջարկին, որը լավագույնս կհամապատասխանի տեխնիկական առաջադրանքին, ծրագրի նպատակներին: Հաշվի կառնվի հայտատուի նախկինում իրականացված նախագծերի պատմությունը, ունեցած որակավորումները, այլ պատվիրատուների համագործակցության մասին դրական արձագանքը, և գնային քաղաքականությունը: Գնային առաջարկը պետք է բխի հայկական շուկայում նմանատիպ ծառայությունների համար գործող շուկայական գներից:

Գնահատման ժամանակ առավելություն կտրվի կազմակերպության հետ դրական փորձ կուտակած դիմորդին:

## **7. ՎճԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Վճարման պայմանները և կարգը ենթակա են հետագա բանակցման:

## **ՀԱՎԵԼՎԱԾ Ա**

### **ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՑԱՆԿԻ ՀԱՐԹԱԿԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՄ**

#### **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ՝ Փաստերի ստուգման ցանկի հարթակի նախագծում եւ մշակում**  
**ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾԸ՝ Պայմանագրի կնքումից հետո 6 ամիս**  
**ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Երեւան, Հայաստան**

---

#### **1. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

«Մեդիա և տեղեկատվական գրագիտության արթնաբեր» (Media and Information Literacy Accelerator - MILA) ծրագիրը նպաստելու է Հայաստանում ապատեղեկատվությանը դիմացկուն հասարակության ձևավորմանը, հանրության, մեդիա ներկայացուցիչների՝ ապատեղեկատվության բացահայտման և փաստերի ստուգման ուղղությամբ կարողությունների զարգացմանը: Ծրագրի միջոցով կմշակվի մեդիա դաշտի համար կրթական ծրագիր՝ Աբսելերատոր, որի շրջանակներում կիրականացվեն հետազոտություններ, դասընթացներ, Յեթըթոն, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կմշակվեն գործիքներ ու հարթակներ, որոնք կնպաստեն ծրագրի երկարաժամկետ նպատակների իրականացմանը:

#### **2. ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Ծրագրի նպատակն է զինել հանրությանը մեդիագրագիտության հմտություններով, փաստերի ստուգման կարողություններով, նպաստել ապատեղեկատվությունից պաշտպանված լինելուն, ինչպես նաև տեխնոլոգիաների կիրառմամբ մշակել գործիքներ/արտադրանքներ, որոնք կնպաստեն մեդիա աշխատողների՝ փաստերի ստուգման աշխատանքին, կիսթանն հետազոտական ու հետաքննական լրագրության որակի բարձրացումը, կօգնեն լրագրողներին զարգացնել կարողությունները մեդիագրագիտության, փաստերի ստուգման, ապատեղեկատվության բացահայտման գործում, կնպաստեն հանրության թվային անվտանգության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության և ստուգման հմտությունների զարգացմանը:

#### **3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

«Մեդիա և տեղեկատվական գրագիտության արթնաբեր» ծրագրի շրջանակներում SS գործիքների նախագծման և մշակման նախագծի արդյունքում Հայաստանում մեդիա բովանդակության սպառողներին և լրագրողական համայնքին կառաջարկվեն նորարարական և օգտագործմանը հարմար տեխնիկական լուծումներ, որոնք կնպաստեն ապատեղեկատվության և քարոզչության նկատմամբ դիմացկուն հասարակության ձևավորմանը:

#### 4. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. 6 ամիս

#### 5. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Սույն առաջադրանքի հատուկ նպատակն է մշակել միասնական թվային գործիքակազմ, որը միավորում է հանրային աղբյուրներից գեներացված բոլոր հասանելի տեղեկությունները հայկական լրատվամիջոցների աշխատակիցների կողմից փաստերի եւ տվյալների ստուգման ժամանակ օգտագործվող առկա բաց տվյալների բազաների մասին:

#### 6. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԱՏՈՒԿ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սույն առաջադրանքի հատուկ արդյունքը կլինի օգտատերերի համար հարմարավետ, տեխնիկական լուծումներով նոր վեբ-պորտալի գործարկումը, որը թույլ կտա հայկական լրատվամիջոցների աշխատակիցներին ինայել ժամանակը՝ փաստերի ստուգման եւ բացահայտման գործընթացն առավել արդյունավետ դարձնելով:

#### 7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Ստեղծվող նոր վեբ-պորտալը պետք է ունենա հետևյալ հնարավորությունները.

##### 7.1. Պորտալի առանձնահատկությունները.

- Հայաստանյան լրատվամիջոցների աշխատողները պետք է կարողանան հեշտությամբ անցում կատարել պորտալի մեկ էջից մյուսին և որոնել համապատասխան աղբյուրներ: Բոլոր առկա աղբյուրները պետք է՝ 1) օգտատիրոջն ուղղորդեն աղբյուրի հիմնական էջ (վեբ էջ) 2) օգտատիրոջն ուղղորդեն աղբյուրի ընդհանուր էջ, որտեղ պետք է ներկայացված լինեն ընտրված աղբյուրի մասին ավելի մանրամասն տեղեկություններ (անունը նկարագրությունը, URL տեղորոշիչը, անվանակարգը, ուղեցույցը, պիտակները/թեգերը եւ այլն):
- Համակարգի բոլոր համապատասխան այցելուները պետք է կարողանան հարցում ուղարկել Պորտալի ադմինիստրատորներին՝ նոր հանրային աղբյուրի մասին տեղեկատվություն ավելացնելու համար:
- Պորտալում ներկայացված բոլոր աղբյուրները պետք է ունենան առնվազն մեկ պարտադիր կապ նախապես սահմանված անվանակարգերի կամ այլ դասակարգիչների հետ և/կամ ընտիր կապ նախապես սահմանված պիտակների հետ:
- Պորտալը պետք է ապահովի օգտատերերի սահուն գրանցման, մուտքաբառի եւ գաղտնաբառի վերականգնման գործընթացը. գրանցման գործընթացը պետք է լինի բավական կարճ, որպեսզի օգտատերերին չհասցնի հոգևեցնել: Մուտք գործելուց հետո օգտատերերը պետք է ունենան փակ անձնական էջ՝ իրենց հաշվի տվյալները թարմացնելու հնարավորությամբ: Նախքան անձնական հաշվի ակտիվացումը, պետք է իրականացվի էլեկտրոնային փոստի և/կամ բջջային հեռախոսահամարի միջոցով օգտատիրոջ ինքնության վավերացում: Օգտատերը պետք է



հնարավորություն ունենա մուտք գործել Պորտալ Facebook-ում, Twitter-ում եւ/կամ Google-ում ունեցած հաշիվների միջոցով:

- Ապահովել, որպեսզի գրանցված օգտատերերին թույլատրվի ստեղծել և կառավարել տարրերի (աղբյուրների) ցանկը «բաշել-զցել» (drug and drop) գործիքի կամ օգտագործման համար մատչելի այլ գործիքների միջոցով՝ օգտագործելով արդեն հասանելի եւ հրապարակված աղբյուրները պորտալում, ինչպես նաեւ ստեղծել սեփական տարրերը (աղբյուրները)՝ հաշվի առնելով արդեն սահմանված կառուցվածքը (անունը, նկարագրությունը, URL տեղորոշիչը, անվանակարգը, ուղեցույցը, պիտակները եւ այլն), որոնք պետք է հասանելի լինեն միայն ցանկը ստեղծողին:
- Հանրային աղբյուրներ մուտք գործելու համար պորտալում նավիգացիան պետք է լինի ինտուիտիվ և հեշտ յուրացվող՝ համապատասխան անվանակարգերով եւ/կամ ոլորտներով դասակարգված:
- Պորտալը պետք է ունենա ադմինիստրատորի մակարդակով մուտք գործելու հնարավորություն՝ կայքի բովանդակությունը (ներառյալ անունները, նկարագրությունները, URL-տեղորոշիչները, անվանակարգերը, ուղեցույցները, պիտակները) խմբագրելու/ջնջելու/թարմացնելու համար, ինչպես նաև նոր աղբյուրների վերաբերյալ հարցումները ստանալու եւ ստուգելու, ՀԼԱ թիմի կողմից անհրաժեշտ համարվող ցանկացած այլ էջ/ պատուհան/վահանակ Պորտալի էջում տեղադրելու համար:
- Պորտալում պետք է ցանկացած վերլուծական կոդ (Google Analytics, Facebook Pixel) ինտեգրելու հնարավորություն լինի համադրման և ներդրման փուլերով՝ վիճակագրական և/կամ այլ նպատակների համար:
- Հնարավորություն ունենալ ինտեգրել Պորտալի տվյալները լայնորեն օգտագործվող մեսենջերների (Facebook Messenger, Telegram, WhatsApp) հետ՝ API ինտեգրացիայի միջոցով:
- Խստորեն հետևել SՅՏ արտադրանքի եւ ծառայությունների մատչելիության պահանջներին, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, Վեբ բովանդակության մատչելիության ուղեցույցով (WCAG):
- Բանալի բառերի ընդլայնված որոնման հնարավորություն:

## 7.2. Պորտալի կարգավորումներն օգտատերերի համար

Պորտալ մուտք գործելով՝ օգտատերն աչքի է անցկացնում հասանելի աղբյուրների ցանկը և ընտրում անհրաժեշտ աղբյուրը: Անմիջապես աղբյուրի անվան վրա սեղմելով՝ օգտատերը վերառնվում է աղբյուրի հիմնական էջ: Տեղեկատվության աղբյուրը պետք է ունենա նաև հիմնական էջ, որտեղ ներկայացվում են առավել մանրամասն տեղեկություններ (ներառյալ՝ անունը, նկարագրությունը, URL տեղորոշիչը, անվանակարգը, ուղեցույցը, պիտակները եւ այլն): Օգտատիրոջը պետք է հնարավորություն տրվի որոնել աղբյուրներն ըստ անվան, պիտակի, անվանակարգի և թարմացման ամսաթվով: Օգտատերը պետք է կարողանա գրանցվել կայքում և ստեղծել /կառավարել աղբյուրների սեփական ցանկը: Օգտատիրոջ անձնական էջում արտացոլվում են վերջինիս անձնական հաշվի մասին տվյալները և օգտատիրոջ կողմից

գեներացված աղբյուրների ցանկը: Չգրանցված եւ գրանցված օգտատերերին պետք է հավասարապես թույլատրվի Նոր աղբյուրներ առաջարկել՝ Պորտալում լրացնելով համապատասխան դիմումի ձևը: Համակարգի ադմինիստրատորի կողմից աղբյուրը ստուգելուց հետո, այն պետք է հասանելի դառնա Պորտալում: Համակարգի ադմինիստրատորը պետք է նաև էլեկտրոնային փոստով ծանուցում ստանա Պորտալի միջոցով ստացված յուրաքանչյուր հարցման մասին:

ԿԱՐԵՎՈՐ Է. նկարագրված կարգավորումները կարող են փոփոխվել եւ համապատասխանեցվել ՀԼԱ կողմից սահմանված չափով՝ հաշվի առնելով նախագծի ընթացքը եւ օգտատերերի կարիքները:

### 7.3. Պորտալի կառուցվածքը

- Պորտալի աշխատանքային լեզուն պետք է լինի հայերենը (հետագայում անգլերեն ավելացնելու հնարավորությամբ ) և ունենա չգրանցված և գրանցված օգտատերերի համար եռամսյակային մուտքի և ադմինիստրատորի մուտքագործման հնարավորություն (պետք է տեղակայվի սահմանափակ հասանելիությամբ IP հասցեների միջոցով, որոնք ներառված են թույլատրելի ցուցակում):
- Մշակվող հավելվածի մասշտաբայնությունը բարելավելու և այն օգտագործման համար առավել դյուրին դարձնելու համար՝ խորհուրդ է տրվում հիմնվել հավելվածի այնպիսի կառուցվածքի վրա, որը հնարավորություն կտա պարզեցնել հավելվածի օգտագործումը և սպասարկումը, ավելացնել նոր գործառույթներ և կարճ ժամանակում վերացնել սխալներն ու անճշտությունները:
- Ինտերֆեյսից ուղարկվող բոլոր հարցումները պետք է ժամանակին պատասխան ստանան սերվերի կողմից՝ չստիպելով օգտատիրոջը երկար սպասել (էջի բեռնման ժամանակը կազմում է < 0.2 վայրկյան)
- Կայքի արագությունը. կանոնարկված էջի բեռնումը՝ 1-5 վրկ 512 Կբիթ/վրկ, GTmetrix արագությունը՝ 80 %-ից բարձր:
- Պորտալը պետք է համապատասխանի որոնողական համակարգերի օպտիմալացման (SEO) չափանիշներին և SEO հետ համադրվող URL-տեղորոշիչներին:
- Իրականացնել սերվերի ստուգում և անվտանգության ապահովում հիմնական սպառնալիքների դեմ (SQL ներարկում, Ddos հարձակում, Brute-force հարձակում, XSS):
- Միջբրաուզերային համատեղելիություն
- Պորտալը պետք է ապահովի հարթակի արդյունավետ աշխատանքը՝ օպտիմալացված բեռնման արագությամբ:

### Օգտատիրոջ ինտերֆեյսի դիզայն

- Ինտերֆեյսի դիզայնը պետք է լինի ինտուիտիվ մակարդակով հասկանալի, հարմար և համատեղելի բջջային սարքավորումներով օգտագործելու համար: Գնման մրցույթի հայտատուն պետք է ներկայացնի օգտատիրոջ ինտերֆեյսի դիզայնի առնվազն երկու իրարից տարբերվող տարբերակ: Օգտատիրոջ ինտերֆեյսի դիզայնը պետք է հաստատվի ՀԼԱ կողմից նախքան համակարգում ներդրվելը:
- Վիզուալիզացիայի հնարավորությունները պետք է թույլ տան նոր գործառույթներ ավելացնել առանց ելակետային կոդի փոփոխության:
- Նավիգացիոն պարամետրերը պետք է լինեն տեսանելի եւ հասկանալի: Տեղեկատվության կառուցվածքային անցումները պետք է պարզ ու հասկանալի լինեն, այսինքն՝ պետք է հստակ լինի, թե Պորտալի որ բաժնում է տվյալ պահին գտնվում օգտատերը, եւ նա պետք է կարողանա հեշտությամբ վերադառնալ նախորդ էջերին:
- Պորտալում օգտագործվող տառատեսակները պետք է ընթեռնելի լինեն և ունենան տեսողական հիերարխիա:
- «404-սխալ. Էջը չի գտնվել» որոնման կարգավիճակի ծանուցումը պետք է օգտատերերին հասկանալի և մատչելի ձևով ներկայացվի:

#### **Ինտեգրում չատրոտերին.**

- Պորտալի տվյալները պետք է ավտոմատ փոխանցվեն ընտրված չատրոտ API-ին (API - կիրառական ծրագրավորման ինտերֆեյս) դիմամիկ եղանակով: Չատրոտի պոտենցիալ օգտատերերը պետք է կարողանան հեշտությամբ գտնել իրենց որոնած աղբյուրները չատրոտի ինտերֆեյսի միջոցով, որտեղ գիտելիքների բազան պետք է հենվի պորտալի տվյալների և շրջանակների վրա: Չատրոտ API-ն և/կամ այլ հարթակները պետք է ընտրվեն հայտատուի կողմից և հաստատվեն ՀԼԱ կողմից:

#### **7.4. Միջավայր**

Պորտալը պետք է անկախ լինի հարթակից, ինչը նշանակում է, որ այն պետք է հասանելի լինի ցանկացած հարթակում եւ լինի ինքնուրույն՝ կառավարելով բոլոր արտաքին կարիքներն առանց ակտիվ արտաքին միջամտության:

Հայտատուն պատասխանատու է լինելու Պորտալի տեղակայման/հոսթինգի, տեխնիկական երաշխիքային սպասարկման եւ ծրագրավորմանն առնչվող թեթև խնդիրների դեպքում աջակցության համար՝ Պորտալի հանձնումից հետո առնվազն 1 տարվա ընթացքում:

## 7.5. Ելակետային կողի չափանիշները

Ընդհանուր առմամբ, կողը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

- \* Անվնաս. կարող է օգտագործվել առանց հարթակին վնաս պատճառելու
- \* Անվտանգ. հեշտությամբ ցանցահեղուների թիրախ չի դառնա
- \* Հուսալի. միշտ աշխատում է այնպես, ինչպես հարկն է
- \* Փորձարկելի. կարող է փորձարկվել կողավորման մակարդակով
- \* Սպասարկելի. կարող է սպասարկվել, անգամ երբ կողի բազան անի
- \* Դյուրատար. աշխատում է հավասարապես ցանկացած միջավայրում
- \* Փոխանցման հնարավորություն. կարող է սահուն փոխանցվել այլ ծրագրավորողի

Մասնավորապես.

1. Կողը պետք է լավ փաստագրված լինի: Կողի յուրաքանչյուր հատված պետք է պատշաճ կերպով մեկնաբանվի՝ դրա ընկալումը պարզեցնելու համար,
2. Կողը պետք է պարունակի համաձայնեցված անվանակոչության եղանակներ ամբողջ համակարգի տեղական փոփոխականների, ընդհանուր փոփոխականների, հաստատունների, գործառույթների, CSS դասերի եւ նույնացուցիչների համար:
3. Կողը պետք է պարունակի հետեւողական եւ հասկանալի սխալի վերադարձի արժեքներ, եւ բացառությունների մշակման եղանակներ: Սխալը վերադարձնող հաղորդագրությունները պետք է ցուցադրվեն այնպես, որ օգտատերերին չանհանգստացնեն, սակայն բավարար տեղեկատվություն տրամադրեն ուղղումներ կատարելու համար:

## 7.6. Մասնակիցը պատասխանատու է լինելու հետևյալի համար.

- Կայքերին և բջջային սարքավորումների օգտագործմանը հարմարեցվող դիզայն, Պորտալի հեշտ հարմարեցվող ինտերֆեյսի դիզայն, ինչը թույլ կտա այն օգտագործման համար ոչ ուրիշ դարձնել բջջային հեռախոսներից մուտք գործելու դեպքում
- Ֆրոնթենդ (կայքի սովորական տեսքը, որը տեսնում են այցելուները կամ օգտատերերը) և Բեքենդ (կայքի ինտերֆեյս, որտեղ կայք ստեղծողը կարող է ավելացնել նոր բովանդակություն, նոր գործառույթներ և փոփոխել Ֆրոնթենդը) ինտերֆեյսի մշակում
- Տվյալների բազայի մշակում (սուբյեկտների միջև հարաբերությունները պետք է հստակ սահմանված լինեն)
- Ծրագրավորման անվտանգ մեթոդների ներդրման ապահովում
- Բազմալեզու ֆունկցիոնալության ներդրում (հայերեն և անգլերեն)
- Բովանդակության կառավարման համակարգի (ադմինիստրատորի վահանակի) ստեղծում հարմարեցված Լաբորատորիայի կարիքներին (օրինակ՝ օգտատերերի կառավարում, հատուկ հաղորդագրություններ՝ հիմնված առկա տվյալների վրա)
- Անհրաժեշտության դեպքում աջակցություն բովանդակության և դրանց թարմացումների գործընթացին

- Բազմալեզու տվյալների մուտքագրման գործընթացի պահպանում և համակարգում մինչև համակարգի վերջնական հանձնումը
- Իրականացնել որակի ապահովում ծրագրի մշակման և ներդրման ընթացքում
- End to end/համապարփակ տեղակայում անվտանգ միջավայրում
- Անհրաժեշտության դեպքում կայքի հոսթինգի ապահովում,
- Պորտալի անվտանգության ապահովում
- Համագործակցություն ՅԼԱ թիմի հետ՝ աշխատանքների կոորդինացման համար
- ՅԼԱ թիմի վերապատրաստում՝ Պորտալի հետագա կառավարման համար
- Ապահովել ելակետային կոդերի և Պորտալին առնչվող բոլոր իրավունքների սահուն, ժամանակին և ամբողջական փոխանցումը ՅԼԱ-ին և/կամ ՅԼԱ-ի կողմից նշված այլ հաստատություններին/անձանց:

**8. ԱՎՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

8.1. Սույն Տեխնիկական առաջադրանքում նշված գործողությունների իրականացման համար սերտ համագործակցություն է ակնկալվում հայտատուի և ՅԼԱ ծրագրային թիմի մեջ:

#	Ակնկալվող արդյունքներ	Արժեք	Իրականացման ժամկետ
1	Պորտալի դասավորության, դիզայնի մշակում	30%	
2	Ֆրոնթենդ, բեքենդ մշակում, ներառյալ՝ համակարգի մանրամասն տեխնիկական բնութագրերը	20%	
3	Ադմինիստրատորական վահանակի մշակում	10%	
4	Անվտանգության համապարփակ գնահատում, որակի ապահովում և փորձարկում	20%	
5	Պորտալի տեղակայում	20%	

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ՝ «InVID» ստուգման օժանդակ ծրագրի տեղայնացում**

**ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ Պայմանագիրը ստորագրելուց հետո 3 ամիս**

**ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Երեւան, Հայաստան**

---

**1. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

«Մեդիա և տեղեկատվական գրագիտության աքսելերատոր» ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում ապատեղեկատվությանը դիմացկուն հասարակության ստեղծմանը՝ հանրության, մեդիա ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը, հանրային, ապատեղեկատվության բացահայտմանը և փաստերի ստուգմանը, Աքսելերատորի մշակման, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող նախագծերի միջոցով, ներառյալ՝ Մեդիա և տեղեկատվական գրագիտության հեքթրոնը, SS լուծումների միջոցով փաստերի ստուգման գործիքների/արտադրանքների մշակումը և այլն:

**2. ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Ծրագրի նպատակն է մշակել գործիքներ/արտադրանքներ, որոնք օգտագործում են ներկայիս տեխնոլոգիական և մեդիա ներուժը՝ օգնելու Հայաստանի հասարակությանը դառնալ ավելի մեդիագրագետ, հզորացնել հայաստանյան մեդիա համայնքի, լրագրողների ներուժը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարածաշրջանային լրատվամիջոցներին. զարգացնել լրատվամիջոցների աշխատողների կարողությունները մեդիագրագիտության, փաստերի ստուգման, ապատեղեկատվության բացահայտման գործում, բարելավել մարզերում գործող մեդիա ոլորտի ներկայացուցիչների և հանրության թվային անվտանգության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության և ստուգման վերաբերյալ ըմբռնումները:

**3 ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

«Մեդիա և տեղեկատվական գրագիտության աքսելերատոր» ծրագրի շրջանակներում SS գործիքների նախագծման և մշակման միջոցառումների շրջանակներում Հայաստանում զանգվածային լրատվամիջոցների սպառողներին և լրագրողական համայնքին կառաջարկվեն նորարարական և օգտագործմանը հարմար տեխնիկական լուծումներ, որոնք կնպաստեն ապատեղեկատվությանը և պրոպագանդային դիմացկուն հասարակության ձևավորմանը:

**4. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

4.1 3 ամիս

## 5. ԱՌԱՋԱԴՐԱԼՔԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Առյժն առաջադրանքի հատուկ նպատակն է տեխնիկական աջակցություն տրամադրել ՀԱԱ թիմին՝ «InVID» ստուգման օժանդակ ծրագիրը հայերեն լեզվով տեղայնացնելու (համապատասխանեցնելու) հարցում :

## 6. ԱՌԱՋԱԴՐԱԼՔԻ ՀԱՏՈՒԿ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Այս առաջադրանքի հատուկ արդյունքն է տեղայնացնել բաց աղբյուրների թվային գործիքներ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի մեդիա աշխատողների կողմից՝ բացահայտելու խնդրահարույց պատմությունները և գնահատելու սոցիալական մեդիայի միջոցով տարածված տեսանյութերի ու բովանդակության հավաստիությունը:

## 7. ԱՇԽԱՏԱԿՆԵՐԻ ՇՐՋԱԼԱԿ

### 7.1 «InVID» օժանդակ ծրագրի մասին.

«InVID»-ը բաց ծածկագրով գործիք է (ստուգման օժանդակ ծրագիր), որն իր օգտատերերին հնարավորություն է տալիս հայտնաբերել, նույնականացնել և ստուգել սոցիալական ցանցերի միջոցով տարածված լրատվության հավաստիությունն ու ճշգրտությունը:

Այս օժանդակ ծրագիրը նախագծվել է որպես բովանդակության ստուգման ոլորտում ստեղծված «շվեյցարական բանակի դանակ» (բազմաֆունկցիոնալ գործիք), որն օգնում է լրագրողներին, փաստերը ստուգողներին և իրավապաշտպաններին խնայել ժամանակը և ավելի արդյունավետ գործել սոցիալական ցանցերում փաստերի ստուգման և բացահայտման, հատկապես տեսանյութերի և պատկերների ստուգման ժամանակ: Բրաուզերի այս ընդլայնումը հետագայում մշակվել և համալրվել է նոր գործիքներով, որոնք ստեղծվել են «Հորիզոն 2020» ԵՄ նորարարության ծրագրի ընթացքում մշակված WeVerify հավելվածի (2018-2021) շրջանակներում:

2021 թվականին «InVID»-ը շահել է «ԱՄՆ-Փարիզ տեխնիկական մարտահրավերներ» մրցույթի առաջին մրցանակը, որը շնորհվել է ԱՄՆ Պետդեպարտամենտին առընթեր Գլոբալ փոխգործակցության կենտրոնի (GEC) կողմից Փոյնթերի ինստիտուտին, որտեղ ստեղծվել է Փաստերի ստուգման միջազգային ցանցը (IFCN): Օժանդակ ծրագիրը գործարկվել է դեռևս 2017 թվականի հուլիսին՝ «Հորիզոն 2020» նորարարության ծրագրի «InVID» եվրոպական նախագծի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից՝ թիվ 687786 դրամաշնորհային պայմանագրով:

InVID գործիքակազմը տրամադրվում է բաց կոդով GitHub-ի միջոցով (<https://github.com/AFP-Medialab/invid-verification-plugin/>)՝ MIT լիցենզիայի ներքո:

Այս գործիքակազմը հնարավորություն կտա հայաստանյան լրատվամիջոցների աշխատակիցներին, լրատվական գործակալություններին, բացառապես թվային հարթակներում գործող մեդիա կազմակերպություններին, թերթերին և հրատարակչություններին ինտեգրել սոցիալական մեդիայում տարածվող տեղեկատվությունն իրենց նորությունների մեջ՝ առանց դժվարանալու ստուգելով, թե, արդյոք, իրենց կողմից արտատպվող նյութը վստահելի է կամ չանհանգստանալով, թե

ինչպես կարող են դիմել օգտատիրոջը կյուբի օգտագործման թույլտվություն ստանալու համար: Այս գործիքակազմը հնարավորություն է տալիս, որպեսզի ստուգված և հեղինակային իրավունքների հետ կապված խնդիրներ չունեցող տեսանյութը հասանելի լինի հրատապ և ընթացիկ նորություններում ներկայացնելու համար:

**7.2. InVID ստուգման օժանդակ ծրագրի օգտագործումը.**

Իր գործարկումից ի վեր, InVID օժանդակ ծրագիրն ունի ավելի քան 170 000 օգտատեր ողջ աշխարհում: Այն հատկապես հաճախ է օգտագործվում մի շարք երկրներում. առաջին երեք տեղերն օգտատերերի քանակով կիսում են Ֆրանսիան (25821 օգտատեր), ԱՄՆ-ն (16315 օգտատեր), Յնդկաստանը (8734 օգտատեր): Ռուսաստանը 1921 օգտատերերով 21-րդ տեղում է, 22-րդ տեղում գտնվող Ուկրաինայում ծրագիրն ունի 1710 օգտատեր, իսկ 71-րդ հորիզոնականում գտնվող Հայաստանում ծրագրի օգտատերերի թիվը հասնում է 392-ի:

**7.3. Հայտատուն պատասխանատու կլինի հետևյալի համար.**

- AFP Medialab R&D-ի հետ համատեղ իրականացվող տեղայնացման գործողությունների համակարգում
- Համապատասխան տեղայնացման գործընացի մշակում ` AFP Medialab R&D չափանիշներին համապատասխան
- Առկա հաղորդագրությունների (մոտավորապես 600) թարգմանություն հայերեն լեզվով
- InVID օժանդակ ծրագրի օգտատիրոջ ձեռնարկի և հարակից այլ փաստաթղթերի թարգմանություն հայերեն լեզվով
- Տեղայնացման որակի ապահովում (QA) InVID օժանդակ ծրագրի թարմացված տարբերակի համար` հայկական ինտերֆեյսի օգտագործմամբ:

**5. ԱՎՆԿԱՎՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

5.1. Սույն Տեխնիկական առաջադրանքում նշված գործողությունների իրականացման համար սերտ համագործակցություն է ակնկալվում հայտատուի եւ ՀԼԱ ծրագրային թիմի մեջ:

#	Ակնկալվող արդյունքներ	Արժեք	Իրականացման ժամկետ
1	InVID օժանդակ ծրագրի տեղայնացում հայերեն տարբերակով, ներառյալ ձեռք բերված արդյունքներով որակի ապահովման հաշվետվությունը	50%	
2	InVID օժանդակ ծրագրի օգտատիրոջ ձեռնարկների և հարակից փաստաթղթերի տեղայնացում, ներառյալ ձեռք	20%	



	բերված արդյունքներով որակի ապահովման հաշվետվությունը		
3	Ավարտական ամփոփ հաշվետվություն, որը ներառում է InVID հավելվածի տեղայնացման ժամանակ օգտագործված բոլոր ելակետային նյութերը	30%	